«Հասարակական կազմակերպությունների և ՀՀ Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի համագործակցության հարթակ՝ հանուն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների» աշխատաժողով

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Դեկտեմբերի 27-28, 2018, Ծաղկաձորում տեղի ունեցավ **«Հասարակական կազմակերպությունների և ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժերի համագործակցության հարթակ՝ հանուն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների»** խորագրով աշխատաժողովը, որի նպատակն էր համագործակցության հիմքեր ստեղծել ԱԺ նորընտիր պատգամավորների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների միջև կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման շուրջ արդյունավետ երկխոսություն ծավալելու և համատեղ քայլեր իրականացնել «Կանանց օրակարգը՝ հանուն զարգացման» փաստաթղթում ներառված հիմնահարցերի լուծման ուղղությամբ:

Աշխատաժողովին մասնակցեցին նորընտիր Ազգային ժողովում ներկայացված **երեք քաղաքական ուժերի ներկայացուցիչները**, մասնավորապես ԱԺ պատգամավորներ, *տեղական, պետական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ, ՋԼՄ ներկայացուցիչներ:*

Քննարկումներին, որպես բանախոս հանդես եկան Անի Սամսոնյանը, Աննա Կոստանյանը՝ **«Լուսավոր Հայաստան»** կուսակցությունից, Արսեն Ջուլֆալակյանը և Սոս Ավետիսյանը՝ **«Իմ քայլը»** դաշինքից և **«Բարգավաճ Հայաստան»** կուսակցության մամուլի խոսնակ Վանիկ Էլիզբարյանը:

Քննարկմանը ներկա էին նաև նաև **ԲՀԿ Երիտասարդական թևի ներկայացուցիչներ**՝ Քրիստինա Պետրոսյանը, Մարինե Հովսեփյանը, Արփինե Աթոյանը, Լիաննա Մանուկյանը:

Որոշվեց

1. Ձևավորել Ազգային ժողով-հասարակական կազմակերպություններ-ՁԼՄ-ներ եռակողմ համագործակցության հարթակ, որը կգործի համակարգող խորհրդի աջակցությամբ և կազմված կլինի քաղաքական ուժերից, տեղական ՀԿ-ներից և ՁԼՄ ներկայացուցիչներից;
2. Հարթակի նախաձեռնությամբ մարտի 8-ին կազմակերպել Ազգային ժողովում հանրային լսումներ «Կանանց օրակարգում» ներառված հիմնահարցերի շուրջ: Նախապատրաստական աշխատանքները կհամակարգվեն խորհրդի անդամների կողմից:

Քննարկված թեմաներ՝

1. ԱԺ արտահերթ խորհրդարանական ընտրություններին կանանց մասնակցության գնահատականը
2. «Կանանց օրակարգը՝ հանուն զարգացման» փաստաթղթում ներառված հիմնահարցեր

Փորձագետ **Թամարա Հովնաթանյանը** ԱԺ արտահերթ խորհրդարանական ընտրություններին կանանց մասնակցությանն անդրադառնալով մասնավորապես նշեց. «*Դիտարկելով մասնակից 11 քաղաքական ուժերի ընտրական ցուցակներում կին թեկնածուների ներկայացվածությունը գենդերային քվոտայի բարելավման տեսանկյունից, կարելի է փաստել, որ քաղաքական ուժերի մեծ մասը բարի կամք է դրսևորել կանանց ներգրավման առումով և միջինում 32% կին թեկնածուներ ներկայացրել: Դա ավելին է, քան գործող Ընտրական օրենսգրքով սահմանված 25%-անոց քվոտան և, ըստ էության, 30%-ն անցած փուլ կարելի է համարել կուսակցությունների համար: Խնդիրն, իրականում, կին թեկնածուներին ցուցակների առաջնային դիրքերում ներկայացնելու մեջ է. ընտրություններին մասնակից ուժերից միայն մեկի՝ «Ազգային առաջընթաց» կուսակցության ցուցակն էր կին գլխավորում, և միայն երեք կուսակցությունների ցուցակներում կանայք երկրորդ հորիզոնականում էին ներկայացված՝ ՀՀԿ, «Լուսավոր Հայաստան» ու Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցություն*»,- նշեց փորձագետը: Անդրադառնալով տարածքային ցուցակներին, որպես դրական միտում ներկայացրեց այն փաստը, որ եթե նախորդ ընտրություններում ռեյտինգային համակարգով խորհրդարան անցան միայն երկու կին, ապա այս ընտրություններում տարածքային ցուցակներով զգալի ձայներ հավաքած թեկնածուների թվում առնվազն 12 կին կար, և դրա շնորհիվ կանանց թիվը խորհրդարանում աճելու է:

Ներկայացված նյութն ամբողջապես տես նամակին կից:

Փորձագետ **Ջինա Սարգիզովան** ներկայացրեց «Կանանց օրակարգ» փաստաթուղթը:

«Այսօր, երբ ընտրություններն ավարտված են, «Կանանց օրակարգը» շարունակում է ուժի մեջ մնալ և կարող է հիմք հանդիսանալ նորընտիր պատգամավորների հետ արդյունավետ համագործակցության համար», - նշեց բանախոսը:

«Կանանց օրակարգը՝ հանուն զարգացման» փաստաթուղթը

Քաղաքական ուժերի ներկայացուցիչների դիրքորոշումներ

Աննա Կոստանյան, ԱԺ պատգամավոր, «Լուսավոր Հայաստան» կուսակցություն
«Վստահ եմ, որ կանայք ավելի ակտիվ են ներգրավվելու քաղաքականության մեջ, քանի որ այսօր արդեն նման միտում է նկատվում: Կարծում եմ, որ կրթական մակարդակում անհրաժեշտ է բարեփոխումներ անել, որպեսզի կանանց և տղամարդկանց իրավունքների պաշտպանությունը ամրապնդվի կրթության և մշակույթի միջոցով»:

Անի Սամսոնյան, ԱԺ պատգամավոր, «Լուսավոր Հայաստան» կուսակցություն
«Երբ կնոջն ընտրության առջև ենք դնում՝ ընտանիք, ծնելիություն, թե քաղաքականություն, ստեղծում ենք արհեստական դիսկուրս: Սա վատ մեսիջ է, ուստի ավելի շատ պետք է խոսել այն մասին, թե ինչպես են կանայք համատեղում այդ ամենը»:

Արսեն Զուլֆալակյան, ԱԺ պատգամավոր, «Իմ քայլը» դաշինք
«Ոչ միայն քաղաքականության մեջ, գրեթե բոլոր բնագավառներում մենք պետք է ձգտենք տղամարդկանց և կանանց 50/50 մասնակցության»:

Սոս Ավետիսյան, ԱԺ պատգամավոր, «Իմ քայլը» դաշինք
«Եթե մենք ունենալու ենք քվոտայի սիստեմ, բայց դիսկուրսը մնալու է պատրիարխալ, մենք փոփոխություն չենք արձանագրելու»:

Վանիկ Էլիզբարյան, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության մամուլի խոսնակ
«Ազգային ժողովում կանանց հանդեպ բռնության դեմ պայքարի մասին օրինագծի քննարկումների ժամանակ մեծ լումա է ունեցել ԲՀԿ պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը, ում նախաձեռնությամբ խորհրդարանական լսումներ էին կազմակերպվել օրինագծի շուրջ: Առաջիկայում էլ կլինեն հնարավորություններ համագործակցելու՝ 50-50 մասնակցային բանաձևի ու մնացյալ հարցերի վերաբերյալ»:

Աշխատաժողովի ժամանակ բարձրաձայնված հիմնահարցեր.

1. Կանանց քաղաքական մասնակցության ընդլայնում, որոշումների ընդունման մակարդակում կանանց ու տղամարդկանց հավասար ներկայացվածության ապահովում;

2. Կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնում, աշխատանքի շուկայում կանանց նկատմամբ խտրականության վերացում, աշխատանքի և ընտանիքի անդամների խնամքի համատեղման հնարավորությունների ստեղծում;

3. Կրթության համակարգի և ԶԼՄ-ների միջոցով վերարտադրվող և կանանց առաջընթացը խոչընդոտող գենդերային կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունների մշակում և իրագործում;

4. Երկրի զարգացման գործընթացներում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունն ապահովելու ուղղությամբ պետական քաղաքականության հստակեցում, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը երաշխավորող ազգային մեխանիզմի ձևավորում;

5. Առողջապահական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունն ապահովող քաղաքականության բարելավում;

6. Գյուղատնտեսության ոլորտում զբաղված կանանց սոցիալական խոցելիության վերացում, ինչպես նաև ռեսուրսների և վարկերի հասանելիության ապահովում;

7. Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձանց պետական աջակցության մեխանիզմների ստեղծում, խնդրին վերաբերող օրենսդրական դաշտի բարելավում:

Օգտակար հղումներ.

Ֆեյսբուքյան հրապարակումներից հղումներ

հղում 1
հղում 2
հղում 3
հղում 4

Հարցերի և առաջարկությունների դեպքում կարող եք դիմել.

Քրիստինե Հովհաննիսյանին, Գենդերային հավասարության ծրագրերի ղեկավար, ՕքսԵՋեն հիմնադրամ

Հեռ՝ +37411 308 808; +37491 20 34 51
Էլ. հասցե՝ khovhannisyan@oxygen.org.am

Միջոցառումն իրականացվել է «Հավասար. խթանելով կանանց քաղաքական մասնակցությունը ազգային մակարդակում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է «ՕքսԵՋեն» հիմնադրամի կողմից՝ ՊրոՄեդիա-Գենդեր ՀԿ-ի փորձագետների և WomenNet.am կայքի հետ համագործակցությամբ, Շվեդիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ: